

ՀՏԴ 338.1

**ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ, ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան*

**Հոդվածը պատրաստվել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի՝ «ՀՀ արդյունաբերության մրցունակության բարձրացման հնարավորությունները» դրամաշնորհային թեմայով հետազոտության շրջանակներում:**

Հոդվածում մեկնաբանվել են տնտեսագիտական գրականությունում, գիտական հանրայթում մրցունակության սահմանման, գնահատման մոտեցումները՝ արդյունաբերության մրցունակության ինդեքսի ցուցանիշների վերլուծությամբ, ՀՀ արդյունաբերության մրցունակության մակարդակի փոփոխության ընթացքը: Հետազոտությունը կատարվել է ԵԱՏՄ անդամ երկրների արդյունաբերության մրցունակության ինդեքսի ցուցանիշների վերլուծության և բաղադրամասն համատեքստում:

**Բանալի բառեր.** մշակող արդյունաբերություն, արդյունաբերության մրցունակության ինդեքս, բարձր տեխնոլոգիական արտադրանք, մրցունակության վարկանիշ:

**Ներածություն**

Արդյունաբերության ճյուղը գրեթե մշտապես բախվում է մեծագույն մարտահրավերների՝ իր խիստ մրցակցային բնույթի, հումքի և արտահանման շուկաների շարունակական միջազգայնացման հետևանքով: Տնտեսության ցանկացած ճյուղի մրցունակության գնահատման համար նախ հարկավոր է պարզել, թե ինչպիսին է երկրի ազգային տնտեսության մրցունակությունը: Տնտեսության բոլոր ճյուղերի փոխկապակցվածության պայմաններում դրանցից մեկի ինտենսիվ զարգացումն ու մրցունակության մակարդակի բարձրացումը կարող է բազմաբնույթ ազդեցություն ունենալ մյուսների վրա:

Տնտեսական մրցունակության տեսագործական հարցերի քննարկման համատեքստում կարևորում ենք ՀՀ տնտեսության մրցունակության բազմակողմ ուսումնասիրությունը՝ բացահայտելու համար երկրի ողջ տնտեսության, նաև արդյունաբերության մրցունակության վրա ազդող

գործոնները, տնտեսական մրցունակության մակարդակի փոփոխությունների պատճառները և միտումները, երկրի վարկանիշային դիրքը տարածաշրջանում, ախտորոշելու համար այն ընդգծված խնդիրները, որոնք խոչընդոտում են արտադրողականության, հետևաբար նաև՝ մրցունակության բարձրացմանը:

«Մրցունակությունը» բազմամակարդակ, բազմագործոն հասկացություն է: Քննական ուսումնասիրության ենթարկելով և ամփոփելով մասնագիտական գրականության մեջ առկա մրցունակության բազմաթիվ սահմանումները՝ առանձնացվել են մրցունակության սահմանման և գնահատման այն հիմնական դրույթները, որոնք այս կամ այն չափով մատնանշվում ու ընդգծվում են դրանցում.

- մրցունակությունը մրցակցելու կարողություն է և դիտարկվում է մրցակիցների նկատմամբ առավելությունների տեսանկյունից՝ առավելապես կենտրոնանալով «ոչ նյութական» կողմերի վրա [1],
- մրցունակությունը դիտարկվում է հավասարակշռության տեսանկյունից՝ արտադրողն այլ վիճակի փոխադրվելու պատճառ չունի, եթե հասնում է վաճառքի և շահույթի առավելագույն մակարդակին,
- մրցունակությունը գնահատվում է արտադրանքի որակի տեսանկյունից՝ գին/որակ հարաբերակցություն [2],
- կարևորվում է մրցունակության գնահատման մատրիցային մեթոդաբանությունը (Բոստոնյան խորհրդատվական խումբ) [3],
- մրցունակությունը գնահատվում է գործառությանի առումով՝ որոշվում են ծախսերի և գների հարաբերակցությունը, արտադրական հզորությունների օգտագործման ծավալները, արտադրանքի քանակը և այլ ցուցանիշներ [4],
- մրցունակության բարձրացումը դիտարկվում է որպես բարեկեցության բարձրացման նպատակին հասնելու ուղի,
- մրցունակությունը գնահատվում է կառուցվածքային առումով՝ կարևորելով տարածական չափումը: Ըստ այդմ՝ մրցունակությունը դիտարկվում է մակրո և միկրո մակարդակներում [5],
- մրցունակության բարձրացման գործում կարևորվում է ամենանոր և միաժամանակ ամենակարևոր բաղադրիչների՝ գիտելիքի, նորամուծությունների, տեխնոլոգիաների դերը [6],
- մրցունակության բարձրացման մեջ հատուկ ընդգծվում է պետության դերը [7]:

Մրցունակությունը գնահատվում է հեղինակավոր **Համաշխարհային տնտեսական համաժողովի (ՀՏՀ), Կառավարման զարգացման միջազգային ինստիտուտի և Արդյունաբերական քաղաքականության հետազոտման ինստիտուտի** մշակած մեթոդաբանությամբ և վարկանշմամբ:

Մրցունակության համաշխարհային զեկույցը (այսուհետև՝ **ՄՀԶ**) ներկայացնում է աշխարհի երկրների տնտեսական մրցունակության մակարդակների և դրանց՝ տնտեսական աճերի վրա ազդող գործոնների համեմատական վերլուծություն: Առաջին անգամ 1979-ին հրապարակված այս զեկույցն իր վերջին՝ 2019 թ. հրապարակման մեջ ներկայացնում է 141 զարգացած և զարգացող երկրների տնտեսությունների մրցունակության մակարդակների վերլուծությունը, որոնց բաժին է ընկնում աշխարհի ՀՆԱ-ի 99 %-ը [8]:

Սկսած 2005-ից ՀՏՀ-ն մրցունակության վերլուծություններում հիմնվում է համաշխարհային մրցունակության ինդեքսի (այսուհետև՝ ՀՄԻ) վրա, որի միջոցով գնահատվում են ազգային մրցունակության մակրոտնտեսական և միկրոտնտեսական հիմքերը:

ՀՄԻ-ն ամենամյա չափանիշ է, որը հնարավորություն է ընձեռում քաղաքականություն մշակողներին չսահմանափակվելով կարճաժամկետ և արձագանքող միջոցառումներով, գնահատել առաջընթացը՝ ի հաշիվ արտադրողականությունը որոշող մի շարք գործոնների: Համաթիվը նպատակ ունի չափել գործոնների խելամիտ օգտագործման և երկարաժամկետ տնտեսական աճի հիմնական շարժիչի՝ «գործոնների ընդհանուր արտադրողականության» մեծությունը, այսինքն՝ գնահատել տնտեսական աճի՝ արտադրության գործոնների աճով չբացատրվող մասը [8], [2, p. VII]:

ՀՏՀ-ը 2018-ից ՀՄԻ-ն վերանվանել է Համաշխարհային մրցունակության ինդեքս 4.0 (այսուհետև՝ ՀՄԻ 4.0) և կիրառում է դրա հաշվարկման նոր մեթոդաբանություն: ՀՄԻ 4.0-ի մշակման հիմքում ընկած է այն գաղափարը, որ տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժն ու անհրաժեշտ պայմանն արտադրողականության աճն է, որը թույլ է տալիս ապահովել կայուն, երկարաժամկետ և ներառական տնտեսական աճ: Հետևաբար, գնահատվում են բոլոր այն գործոնները, որոնք միասին պայմանավորում են երկրում կյանքի որակի երկարաժամկետ բարելավման կարևորագույն շարժիչ ուժ հանդիսացող արտադրողականության մակարդակը: Մեթոդաբանության փոփոխությունը պայմանավորված է համաշխարհային տնտեսության վերջին զարգացումները, մասնավորապես՝ 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի


հետևանքով արտադրողականության կտրուկ անկումը, դրա երկարատև ազդեցությունը, 4-րդ արդյունաբերական հեղափոխության արդյունքները, գործարարության ձևաչափերի շահութաբերության և կենսունակության ապահովման գործում նորարարությունների մեծացող դերը հաշվի առնելու անհրաժեշտությամբ [9, p. 631-647]:

Արդյունաբերության մրցունակության ինդեքսը՝(ԱՄԻ) Competitive Industrial Performance Index (CIP), որը հաշվարկվում է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության՝ United Nations Industrial Development Organization (UNIDO) կողմից, սկսած 2003-ից, «ամենաերիտասարդ» ինդեքսն է աշխարհի երկրների մրցունակության ամփոփ ինդեքսների խմբում [10]: Ըստ էության՝ այդ ինդեքսը ցույց է տալիս արդյունաբերության ոլորտում ավելացված արժեքի ստեղծման շարժը, այս կամ այն երկրի դիրքավորումը մշակող արդյունաբերության համաշխարհային դասակարգման սանդղակում: Այն նաև հնարավորություն է տալիս հասկանալ, թե այս կամ այն երկրում տնտեսական աճն իրականում ի՞նչ գործոնների հաշվին է ձեռք բերվել: Այս իմաստով ԱՄԻ-ի միջոցով նաև հնարավոր է գնահատել տնտեսական աճի որակը, տնտեսության կառուցվածքային փոփոխությունները: Ինդեքսը բացառում է հանքահումքային ապրանքների, վերամշակման ցածր մակարդակ ունեցող ապրանքների արտադրության ազդեցությունները ՀՆԱ-ի իրական աճի գնահատումներում<sup>1</sup>:

**Վերլուծություն:** 1993-2018 թթ. ՀՀ ՀՆԱ և ԱՄԻ-ի շարժընթացների համեմատությունից պարզ է դառնում, որ ընդհանուր առմամբ այդ ցուցանիշների փոփոխությունների միջև կա որոշակի համադրելիություն (տե՛ս **Գծապատկեր 1**): Տեսանելի է, որ տնտեսական աճի և տնտեսական անկման ժամանակահատվածներն ուղեկցվում են ԱՄԻ-ի համապատասխան աճով և անկմամբ:

1991-1994 թթ. ՀՀ ՀՆԱ-ի կտրուկ՝ շուրջ 60%, անկումն ուղեկցվել է երկրի ԱՄԻ-ի նշանակալի նվազմամբ և այդ ցուցանիշի գծով համաշխարհային դասակարգման ցանկում ՀՀ զբաղեցրած տեղի (վարկանիշի) անկմամբ:


<sup>1</sup> Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Արդյունաբերության մրցունակության ինդեքսը (ԱՄԻ) ըստ էության բաղադրական ցուցանիշ է, որն ընդամենը պատկերացում է տալիս արդյունաբերական մրցունակության համաշխարհային սանդղակում տվյալ երկրի հարաբերական դիրքավորման մասին: Սա նշանակում է, որ ինդեքսի աճը միշտ չէ, որ տվյալ երկրի մրցունակության բացարձակ աճի արտացոլումը կարող է լինել, այլ, հնարավոր է, հանդիսանա այդ ինդեքսով վարկանշավորվող մյուս երկրների մրցունակության վատթարացման հետևանք:



**Գծապատկեր 1. ՀՀ տնտեսական աճի և ԱՄԻ-ի դինամիկան 1993-2018 թթ. ժամանակահատվածում<sup>1</sup>:**


Հետագա ժամանակահատվածում չնայած տնտեսական աճի որոշակի վերականգմանը՝ ԱՄԻ-ն շարունակել է նվազել (**տե՛ս Գծապատկեր 2**): Դա տրամաբանական է, քանի որ 1990-ականները տրանսպորտային շրջափակումների, հումքի մատակարարումների և պատրաստի արտադրանքի վաճառքի շուկաների կորստի պատճառով ՀՀ արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների ճնշող մեծամասնության համար եղել են ճգնաժամային: 2000-ական թվականների սկզբից ՀՀ արդյունաբերության ոլորտում նկատվում են որոշակի դրական, ըստ էության քանակական տեղաշարժեր: Մինչ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը (2008-2009) ՀՀ տնտեսությունը երկնիշ աճ է գրանցել, առավելապես պայմանավորված շինարարության և դրան կապակցված շինանյութերի արդյունաբերության բումով: Ներդրումներ կատարվում էին պետական բյուջեի կապիտալ ծախսերի, ենթակառուցվածքներում՝ դոնորների նվիրատվությունների հաշվին, երկիր էր ներհոսում արտաքին մեծածավալ մասնավոր դրամական փոխանցումներ, որոնց առկայությամբ ձևավորվում ու զարգանում էր ՀՀ հիպոթեքային շուկան:

<sup>1</sup> Այս և մյուս գծապատկերների տվյալները վերցված են ՄԱԿ-ի Արդյունաբերության զարգացման կազմակերպության (UNIDO) վիճակագրական տվյալների շտեմարանից՝ [https://stat.unido.org/database/CIP%202021?fbclid=IwAR0-ZVSPAiga\\_CbZz2kHfquc4I6x8Y1h-Pdhpti12FH6GBPgzh-Z2hoBlzk](https://stat.unido.org/database/CIP%202021?fbclid=IwAR0-ZVSPAiga_CbZz2kHfquc4I6x8Y1h-Pdhpti12FH6GBPgzh-Z2hoBlzk) և/կամ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազայից՝ <https://armstat.am>




**Գծապատկեր 2. ՀՀ ԱՄԻ և դրա գծով ՀՀ վարկանիշի դինամիկան 1990-2018 թվականներին**

Վերլուծությունները ցույց են տալիս, որ 2000-ականներին ՀՀ մշակող արդյունաբերության մրցունակության բարձրացման առումով լուրջ տեղաշարժեր չեն գրանցվել: Մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ի մեջ շեշտակիորեն նվազել է (գրեթե 2 անգամ), 2008 թ. կազմել մոտ 14.2 %, 2004 թ.-ի 25.6 %-ի էր դիմաց (տե՛ս **Գծապատկեր 3**): Բացի վերոնշյալից, իրավիճակի պատճառներից էին նաև երկրում ընթացող լայնածավալ մասնավորեցման, ապապետականացման և դրանց անխուսափելիորեն ուղեկցող կազմալուծման գործընթացները: Արդյունաբերական ամբողջական ձեռնարկությունները, որպես կանոն, մասնավորեցվում էին ոչ թե որպես ամբողջական տեխնիկատեխնոլոգիական և արտադրատնտեսական համալիրներ՝ հաշվի առնելով դրանց պրոֆիլները և զարգացման հնարավորությունները, այլև շատ դեպքերում՝ օտարվում էին որպես անշարժ գույք, հատվածական տեխնիկա, արտադրական շինություններ կամ տարածքներ, պահեստային տնտեսություններ կամ ենթակառուցվածքային բաղադրիչներ: Դա հանգեցնում էր ձեռնարկությունների ապամոնտաժմանն ու նոր սեփականատերերի կողմից դրանց տեխնիկական և պաշարային բաղադրիչների մաս-մաս վաճառքին: Այս պայմաններում մրցունակության մասին խոսք լինել չէր կարող:




**Գծապատկեր 3. ՀՀ մշակող արդյունաբերության ծավալների և ՀՆԱ-ում դրանց մասնաբաժնի աճը 2004-2020 թվականներին**

Վերը նկարագրված գործընթացներն արտացոլված են ՀՀ ԱՄԻ-ի ու դրա առանձին բաղադրիչների փոփոխություններում: Արդյունաբերության մրցունակությունն առաջին հերթին գնահատվում է բնակչության շնչի հաշվով արդյունաբերական ավելացված արժեքի ինդեքսի ( $MVA_{pc}$ ), ինչպես նաև բնակչության շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի արտահանման ինդեքսի ( $MX_{pc}$ ) միջոցով: Ցուցանիշների այս խմբի ներգործությունը ՀՀ ԱՄԻ-ի շարժի վրա ունեցել է միջին մակարդակի ազդեցություն (տե՛ս **Գծապատկեր 4**):



**Գծապատկեր 4. ՀՀ ԱՄԻ և արդյունաբերական արտադրանքարտադրելու ու արտահանելու կարողության ինդեքսների շարժը 1990-2018 թվականներին**

Հատկանշական է, որ 1990-1991 թթ. ՀՀ ԱՄԻ-ն և արդյունաբերության ոլորտում շնչի հաշվով ավելացված արժեքի ստեղծման ցուցանիշները գտնվել են միևնույն մակարդակի վրա: Հետագայում, սակայն, բնակչության շնչի հաշվով ավելացված արժեքի ստեղծման ցուցիչը գրեթե կրկնակի բարձր է եղել, քան ԱՄԻ-ն: 1990-2018 թթ. ԱՄԻ-ն տատանվել է 0.007-0.013 միջակայքում, իսկ  $MVA_{բԵ}$ -ը՝ 0.008-0.022-ի սահմաններում: Դրան հակառակ՝ ԱՄԻ-ի համեմատ շատ ավելի ցածր մակարդակի վրա է գտնվել  $MX_{բԵ}$  ցուցանիշը, որը տատանվել է 0.003-0.015 միջակայքում: Ուսումնասիրվող ժամանակահատվածում Արդյունաբերության տեխնոլոգիական խորության և արդիականացման ենթահինդեքսի ցուցանիշները<sup>1</sup> ի տարբերություն առաջին ենթահինդեքսի ցուցանիշների, ունեցել են փոփոխությունների գրեթե նույն հետագիծը, ինչ ԱՄԻ-ն (տե՛ս **Գծապատկեր 5**):



**Գծապատկեր 5. ՀՀ ԱՄԻ և Արդյունաբերության տեխնոլոգիական խորությունը և արդիականացումը ներկայացնող հինդեքսների փոփոխությունները 1990-2018 թվականներին**


ՀՀ արդյունաբերության տեխնոլոգիական խորությունը և արդիականացումը ներկայացնող ցուցանիշները 1990-1993 թթ. տվյալների համեմատ հետագայում լուրջ հետընթաց են գրանցել: Եթե այդ տարիներին տվյալ ցուցանիշները տատանվել են 0.435-0.811 ( $MVA_{sh}$ ), 0.397-0.436 ( $MHVA_{sh}$ ) և 0.374-0.610 ( $INDint$ ) միջակայքերում, ապա 1994-2018 թթ. տատանվել են համապատասխանաբար 0.197-0.311( $MVA_{sh}$ ), 0.091-0.391 ( $MHVA_{sh}$ ) և 0.131-0.325( $INDint$ ) միջակայքերում (տե՛ս **Գծապատկեր 5**<sup>1</sup>):

<sup>1</sup> «ՀՆԱ-ի մեջ վերամշակող արդյունաբերության ավելացված արժեքի մասաբաժնի հինդեքս»՝ ( $MVA_{sh}$ ), «Մշակող արդյունաբերության ավելացված արժեքի մեջ միջին և բարձրտեխնոլոգիական արտադրությունների ավելացված արժեքի մասաբաժնի հինդեքս» ( $MHVA_{sh}$ ), «Արդյունաբերականացման արդյունավետության հինդեքս» ( $INDint$ )



ծախ առանցք): Նման զարգացումները փաստում են, որ ՀՀ արդյունաբերական համալիրը վերջին մեկուկես տասնամյակում որակական առումով բացասական փոփոխություններ է կրել: Դա հատկապես վերաբերում է ոլորտի բազմազանեցվածության անկմանը, մեծ ավելացված արժեք ստեղծող ենթաճյուղերի և արտադրությունների էական կրճատմանը: Մշակող արդյունաբերության ավելացված արժեքի մեջ փոքր է բարձր-տեխնոլոգիական արտադրությունների բաժինը: Ճիշտ է, վերջին տարիներին INDint-ի գծով որոշ դրական փոփոխություններ առկա են, այդուհանդերձ, լայն իմաստով ծավալային որակական փոփոխությունները դեռևս մնում են անիրականանալի:

ՀՀ ԱՄԻ երրորդ խմբի ցուցանիշները վերաբերում են համաշխարհային տնտեսության մեջ երկրի արդյունաբերության գրաված տեղի տարբեր ասպեկտներին, դիտարկվող ժամանակաշրջանում տարամետ փոփոխություններ են կրել: 5 բաղադրիչ ունեցող<sup>1</sup> այդ խմբի ցուցանիշների փոփոխությունները երկարաժամետում ներկայացված են **Գծապատկեր 6**-ում:



**Գծապատկեր 6. ՀՀ ԱՄԻ ի և համաշխարհային տնտեսության վրա ՀՀ արդյունաբերության ազդեցության ինդեքսների շարժը 1990-2018 թվականներին**

<sup>1</sup> Համաշխարհային արդյունաբերական ավելացված արժեքի մեջ երկրի տնտեսության մասնաբաժնի ինդեքս (**ImWMA**), Արդյունաբերական (մշակող) արտադրանքի համաշխարհային առևտրում տնտեսության մասնաբաժնի ինդեքս (**ImWMT**), Արտահանման մեջ արդյունաբերական (մշակող) արտադրանքի արտահանման մասնաբաժնի ինդեքսը (**MX<sub>sh</sub>**), Արդյունաբերական (մշակող) արտադրանքի ընդհանուր արտահանման մեջ միջին և բարձրտեխնոլոգիական արտադրանքի արտահանման մասնաբաժնի ինդեքս (**MHX<sub>sh</sub>**), Արդյունաբերական (մշակող) արտադրանքի արտահանման որակի ինդեքս (**MXQual**)),


ՀՀ արտահանման մեջ մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման մասնաբաժնի ինդեքսը ( $MX_{sh}$ ) 1990-2018 թթ. շարունակել է մնալ հարաբերականորեն բարձր մակարդակի վրա՝ 0.631-0.930, ինչը, ԱՄԻ-ի բոլոր ենթացուցիչների մեջ ամենաբարձր ցուցանիշն է (տե՛ս **Գծապատկեր 6**, ձախ առանցք): Մշակող արդյունաբերական արտադրանքի ընդհանուր արտահանման մեջ միջին և բարձրտեխնոլոգիական արտադրանքի արտահանման մասնաբաժնի ինդեքսը ( $MX_{sh}$ ) դիտարկվող ժամանակահատվածում գտնվել է 0.106-0.437 միջակայքում, իսկ մշակող) արդյունաբերական արտադրանքի արտահանման որակի ինդեքսը ( $MX_{Qual}$ ) տատանվել է 0.406-0.668 միջակայքում (տե՛ս **Գծապատկեր 6**, ձախ առանցք): Ինչ վերաբերում է արդյունաբերության մրցունակության երրորդ ենթահինդեքսի մնացյալ երկու ցուցանիշներին<sup>1</sup>, ապա դրանց գծով փոփոխությունները և ազդեցություններն էական չեն:

ՀՀ տնտեսության, մասնավորապես՝ արդյունաբերության ոլորտի առաջանցիկ զարգացման ու դրա տեխնոլոգիական արդիականացման ակնկալիքներն առնվազն վերջին 5 տարիներին կապված են եղել նաև ԵԱՏՄ անդամակցության հետ: Ակնկալվում էր, որ միասնական մաքսային տարածքում ներգրավվելը և մոտ 170 միլիոն բնակչություն ունեցող տարածաշրջանային շուկայում միասնական մաքսային պայմաններով առևտրատնտեսական գործունեություն ծավալելը, աշխատանքի, կապիտալի, տեխնոլոգիաների և այլ կարգի պաշարների ազատ փոխանակման, շուկաների ու կարգավորումների միասնականացման, գործարար մշակույթի և տնտեսավարման պայմանների ներդաշնակեցման հնարավորություններից օգտվելը թույլ կտար էապես բարելավել տնտեսական մրցունակությունը և ամրապնդել երկրի մրցակցային դիրքը համաշխարհային շուկայում: Սակայն վերլուծությունները ցույց են տալիս, որ այդ ակնկալիքների մի զգալի մասն այդպես էլ մնում է չիրականացված: ԵԱՏՄ երկրներն իրենց տնտեսական և տեխնոլոգիական զարգացման մակարդակներով շարունակում են զգալիորեն տարբերվել միմյանցից, ինչը բխում է ԵԱՏՄ երկրների ԱՄԻ-ների դինամիկայի ուսումնասիրությունից (տե՛ս **Գծապատկեր 7**):

Բնականաբար ՌԴ արդյունաբերության մրցունակության մակարդակն ավելի բարձր է, քան Հայաստանինը և Ղրղզստանինը: Ցուցանիշների այդ խզումն առկա է եղել սկսած 1990-ից և խորացել է վերջին մեկ ու կես տասնամյակում: UNIDO-ի [11] արդյունաբերության մրցունակության վարկանիշում Հայաստանի համար առավել տիպականը «միջինից

<sup>1</sup> համաշխարհային արդյունաբերական ավելացված արժեքի մեջ երկրի տնտեսության մասնաբաժնի ինդեքս՝ **ImWMA** և մշակող արդյունաբերության արտադրանքի համաշխարհային առևտրում տնտեսության մասնաբաժնի ինդեքս՝ **ImWMT**

ցածր» վարկանիշային դիրքավորումն է, իսկ Ղրղզստանի համար՝ «ցածրը»: Ռուսաստանը 1990-91 թթ. ունեցել է արդյունաբերության մրցունակության «բարձր» վարկանիշային դիրքավորում, հետագայում այն ուրոշակիորեն նվազել է, ու ՌԴ-ն դիրքավորվել է «միջինից բարձր» որակական գնահատման միջակայքում:



**Գծապատկեր 7. ԵԱՏՄ երկրների ԱՄԻ-ների շարժը 1990-2018 թվականներին**

ԵԱՏՄ անդամ մյուս երկու երկրները՝ Ղազախստանը և Բելառուսը, արդյունաբերության մրցունակության ինդեքս վարկանիշում դիտարկվող ժամանակաշրջանում զբաղեցրել են «միջին» կամ «միջինից բարձր» վարկանիշային դիրքեր: Բելառուսն իր արդյունաբերության մրցունակության դիրքը, կարելի է ասել, մշտապես կայուն է պահել՝ դիրքավորվելով UNIDO-ի ցանկի «միջինից բարձր» գնահատական ենթադրող միջակայքում, իսկ Ղազախստանը դիտարկվող ժամանակահատվածում հիմնականում դիրքավորվել է մրցունակության «միջին» մակարդակ ենթադրող հորիզոնականներում, իսկ առանձին տարիներին բարձրացել «միջինից բարձր» վարկանիշավորված տիրույթներ:

### Ամփոփում

«Մրցունակության» հասկացության տեսական մեկնաբանումների քննական ուսումնասիրությունը և ՀՀ արդյունաբերության մրցունակության մակարդակի ցուցանիշների վերլուծությունը թույլ են տվել եզրակացնելու, որ տնտեսության մրցունակության արդի սահմանումներում շեշտադրվում են արտադրողականության բարձրացման, նորամուծությունների ու բարձր տեխնոլոգիական լուծումների կիրառման, մրցունակության բարձրացմամբ բարեկեցության բարձրացմանը նպաստելու և պե-

տության դերի կարևորման մոտեցումները: Արձանագրվել է, որ ՀՀ արդյունաբերության մրցունակության մակարդակը բնութագրող ցուցանիշները համաշխարհային վարկանիշավորման սանդղակում դեռևս բավական ցածր են, ԱՄԻ-2020 վարկանիշում ՀՀ-ն զբաղեցնում է 103-րդ հորիզոնականը՝ 0. 012 ցուցիչով: Դա պայմանավորված է արդյունաբերության կառուցվածքային և որակական անբարենպաստ փոփոխություններով՝ պայմանավորված արդյունաբերության բազմազանեցվածության անկմամբ, մեծ ավելացված արժեք ստեղծող արդյունաբերական արտադրությունների էական կրճատմամբ, մշակող արդյունաբերության ավելացված արժեքի մեջ բարձրտեխնոլոգիական արտադրանքի փոքր տեսակարար կշռով: Թեև վերջին 3-4 տարիներին արդյունաբերության ոլորտում որոշ դրական տեղաշարժեր կան, սակայն կտրուկ առաջընթաց ապահովել դեռևս չի հաջողվել:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

1. **Мокроносос А. Г.**, Конкуренция и конкурентоспособность: учебное пособие / А. Г. Мокроносос, И. Н. Маврина. – Екатеринбург: Изд-во Урал ун-та, 2014. – 194, стр. 49, [https://elar.urfu.ru/bitstream/10995/28814/1/978-5-7996-1098-2\\_2014.pdf](https://elar.urfu.ru/bitstream/10995/28814/1/978-5-7996-1098-2_2014.pdf) վերջին այցելություն՝ 18. 10. 2021
2. <https://business-planner.ru/articles/marketing/analiz-konkurentosposobnosti-produktsii.html>, վերջին այցելություն՝ 18. 10. 2021
3. [https://libraryno.ru/8-2-metody-ocenki-konkurentosposobnosti-predpriyatiya-i-produkcii-strateg\\_menedj/](https://libraryno.ru/8-2-metody-ocenki-konkurentosposobnosti-predpriyatiya-i-produkcii-strateg_menedj/) վերջին այցելություն՝ 18. 10. 2021
4. Конкуренентоспособность компании по ценам и издержкам. <https://economy-web.org/?p=129> վերջին այցելություն՝ 18. 10. 2021
5. **А. Н. Захаров, А. А. Зокин**, Конкуренентоспособность предприятия: сущность, методы оценки и механизмы увеличения. [https://logistics.ru/scm/9/2/i20\\_64.htm](https://logistics.ru/scm/9/2/i20_64.htm) վերջին այցելություն՝ 18.10.2021
6. **И. Б. Кулешова**, Конкуренентоспособность и инновации. <https://cyberleninka.ru/article/n/konkurentosposobnost-i-innovatsii/viewer> վերջին այցելություն՝ 18. 10. 2021
7. **Клинова М. В.**, Государство и национальная конкурентоспособность (на примере ЕС) // Вопросы экономики. 2020. № 8. С. 146-158.

---

<https://www.imemo.ru/publications/info/gosudarstvo-i-natsionalnaya-konkurentosposobnosty-na-primere-es> վերջին այցելություն՝ 18. 10. 2021

8. The Global Competitiveness Report 2019, Klaus Schwab, World Economic Forum [http://www3.weforum.org/docs/WEF\\_GlobalCompetitivenessReport2019.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport2019.pdf) վերջին այցելություն՝ 09.08.2021

9. The Global Competitiveness Report 2018, Klaus Schwab, World Economic Forum, 2018,. <http://www3.weforum.org/docs/GCR2018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2018.pdf> վերջին այցելություն՝ 09. 08. 2021

10. **Валерия Миронов**, Индекс конкурентоспособности ЮНИДО и болезни российской экономики, <https://issek.hse.ru/press/97147261.html> վերջին այցելություն՝ 09. 08. 2021

11. Организация объединенных наций по промышленному развитию, ежегодный доклад ЮНИДО 2019 год, 2020, <https://www.unido.org/sites/default/files/files/2020-05/Annual%20Report%202019%20%28RUS%29.pdf> վերջին այցելություն՝ 09. 08. 2021

---

**АНАЛИЗ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ПРОМЫШЛЕННОСТИ  
АРМЕНИИ ПО ИЗМЕНЕНИЯМ ИНДЕКСА  
КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ПРОМЫШЛЕННОСТИ**

**ГАЯНЕ АВАГЯН, КНАРИК ВАРДАНЯН, АНДРАНИК МАРГАРЯН**

---

*Армянский государственный экономический университет*

---

**Статья подготовлена в рамках исследовательского центра «Амберт» АГЭУ в рамках исследования грантовой темы «Возможности повышения конкурентоспособности промышленности РА».**

Основная цель исследования оценить конкурентоспособность промышленности РА. В статье прокомментированы оценочные подходы к определению и оценки конкурентоспособности в научной литературе и в научном сообществе, с анализом показателей индекса конкурентоспособности промышленности (CIP) и представлен процесс изменения уровня конкурентоспособности промышленности РА. Исследование проводилось в контексте анализа и сравнения индексов конкурентоспособности промышленности стран-членов ЕАЭС.

**Ключевые слова:** конкурентоспособность, обрабатывающая промышленность, индекс конкурентоспособности промышленности, экспорт высокотехнологичных товаров, рейтинг конкурентоспособности.

**ANALYSIS OF THE COMPETITIVENESS OF THE INDUSTRY OF THE  
RA ACCORDING TO THE CHANGES OF THE COMPETITIVE  
INDUSTRIAL PERFORMANCE INDEX**

**GAYANE AVAGYAN, KNARIK VARDANYAN, ANDRANIK MARGARYAN**

---

*Armenian State University of Economics*

---

**The article was prepared within the framework of ASUE "Amberd" Research Center's research on "Opportunities for Increasing the Competitiveness of RA Industry"**

The purpose of the research is the assessment of the competitiveness of the industry of the RA. The article reflects upon the approaches to the definition and evaluation of competitiveness inherent in the economic literature and scientific community. By analyzing the indicators of the Competitive Industrial Performance Index, the process of changing the level of competitiveness of the industry of the RA is also presented. The research was conducted in the context of the analysis and comparison of the indicators of the Competitive Industrial Performance Index of the EEU member states.

**Keywords:** manufacturing industry, Competitive Industrial Performance Index, high-technology export, competitiveness ranking.

*Ներկայացվել է խմբագրություն 09.08.2021  
Երաշխավորվել է տպագրության 11.10.2021*